

Ապրելայան Մարգարիտ*
Երևանի պետական համալսարան

Կարապետյան Մարիամ†
Երևանի պետական համալսարան

ՀԱՅԵՐԵՆ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԼԵԶՎԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ
ՇՂԹԱՆ

ABSTRACT

LINGUISTIC FEATURES AND THE LOGICAL COMPOSITION OF THE
ARMENIAN NOTARY DOCUMENT

The present article makes an attempt to analyze the linguistic peculiarities as well as logical composition of the notary document in Armenian belonging to officialese within the official-documentary style of the language. It reveals the logical structure of the notary document with its three main components and explores interrelations between them.

Key words. Legal documents, state language, official language, structural components of the text, introductive, basic and conclusive components.

* e-mail: margaret.apresyan@ysu.am

† e-mail: mariam.karapetyan@ysu.am



This work is licensed under a Creative Commons
Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 04/07/2023

Revised: 11/07/2023

Accepted: 18/07/2023

© The Author(s) 2023

РЕЗЮМЕ

ЛИНГВИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ И ЛОГИЧЕСКАЯ ПОСЛЕДОВАТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО НОТАРИАЛЬНОГО ДОКУМЕНТА

В настоящей статье предпринята попытка проанализировать язык нотариального документа, принадлежащего к официально-документальному (канцелярскому) стилю в армянском языке. Статья выявляет лингвистические особенности нотариального документа, а также представляет его логическую (трехмерную) структуру с его компонентами.

Ключевые слова. правовые документы, государственный язык, официальный язык, структурные компоненты текста, входная, базовая и выходная составляющие.

ՄՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում փորձ է արվում վերլուծել իրավաբանական՝ մասնավորապես նոտարական փաստաթղթի լեզուն, բացահայտվում է նրա լեզվական և տրամաբանական կառուցվածքը պաշտոնական հայերենում: Հոդվածում նաև վեր է հանվում փաստաթղթի եռամասնյա կառուցվածքը՝ իր բաղադրիչներով և դրանց փոխհարաբերություններով:

Բանալի բառեր- իրավական վավերագրեր, պետական լեզու, պաշտոնական լեզու, տեքստի կառուցվածքային բաղադրիչներ, մուտք, հիմնամաս, ելք:

ՄՈՒՏՔ

Նոտարական փաստաթուղթը իրավական վավերագրի ենթաժանրերից է: Նոտարական փաստաթղթերի կառուցվածքը՝ հատկապես շարահյուսական ձևավորվածությամբ, անգլերենում և հայերենում էապես տարբերվում է: Տարբերությունը դիտարկվող փաստաթղթերի՝ անգլերենի լեզվական կառուցվածքի առավելությամբ և հայերենի զիջողությամբ է աչքի ընկնում: Որոշ չափով սա հասկանալի է նրանով, որ հայոց պետությունը դեռևս ձևավորման փուլում է, որ նշանակում է, թե նրա համապատասխան հաստատությունները ևս այդ փուլում են: Եթե սրան էլ ավելացնենք աշխարհաքաղաքական այն ծանր կացությունը, որում հայտնվել է Հայաստանը, թերևս հնարավոր է որոշ ներողամտությամբ վերաբերվել առկա իրողությանը: Առաջիկայում, անուշտ, պետական հաստատությունների կայացմանը գուզրնթաց, կստեղծվեն նպաստավոր պայմաններ, որոնք կմղեն պատկան մարմիններին՝ պաշտոնական փաստաթղթերը հասցնելու գրագիտության բարձրակետին այնպես, ինչպես կայացած պետություններում է, որոնցում օրենսդրական նախագծերը նախապես անցնում են լեզվական փորձաքննության բովով: Ինչևէ, վերջին ժամանակներում որոշ դրական տեղաշարժ նկատելի է այս ոլորտում, թեև լեզվական վերլուծության համար նոտարական տիպային փաստաթղթեր պրպտելիս ստիպված էինք տևական ընտրություն կատարել դիտարկման հարմար նմուշ գտնելու նպատակով:

Աշխատանքի արդիականությունը իրավական վավերագրերի կիրառական արժեքի վերհանումն ու գնահատումն է՝ իրավաբանության ոլորտում հայերենի գործադրման հնարավորությամբ, որը հրատապ է պետական համակարգի կայացման առումով: Աշխատանքի նպատակն է պարզել նոտարական վավերագրի լեզվավիճակը և նպաստել լեզվական բարձր մակարդակով տիպային նմուշների ստեղծմանը: Նպատակին

հասնելու խնդիրն է իրավական տեքստի կառուցվածքի զննությունը՝ աստիճանավորման մեթոդով: Աշխատանքի նորույթը իրավական տեքստի կառուցվածքի նորովի մեկնությունն է՝ առանցքային բաղադրիչների վերհանմամբ:

Ստորև եռաստիճան քննության ենք ենթարկում առքուվաճառքի պայմանագրի՝ պետականորեն հաստատված մի տիպային նմուշ: Փաստաթուղթը ներկայացնում ենք շղատառ: Նոտարական փաստաթղթի զննությունը կատարում ենք հետևյալ աստիճանականությամբ. 1) բերում ենք փաստաթուղթն ամբողջությամբ. 2) ներկայացնում ենք պաշտոնական (գրական) լեզվի կանոնական համակարգի ապահովման մակարդակը՝ հիմք ունենալով ՀՀ Լեզվի օրենքի 1-ին հոդվածի առաջին պարբերությունը, որի առաջին նախադասությամբ սահմանվում է. «Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, որը սպասարկում է հանրապետության կյանքի բոլոր ոլորտները», իսկ երկրորդ նախադասությամբ սահմանվում է. «Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է». արդ՝ պարտավոր ենք հետազոտության այս աստիճանում պարզել՝ որքանով է պահպանված պաշտոնական հայերենը դիտարկվող նոտարական փաստաթղթում. 3) ներկայացնում ենք փաստաթղթային տեքստի կառուցվածքային բաղադրիչները և վեր հանում դրանց հարաբերությունները:

ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆ: ԴԻՏԱԿՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

ԱՌՔՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ[1]

(Ընդհանուր ձև)

« _____ » _____ թ.
վայրը

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը
այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս _____,
պաշտոնը, ազգանունը, անունը

որը գործում է _____ հիման վրա, մի կողմից, և _____, այսուհետ՝ կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը _____ «Գնորդ», ի դեմս _____, որը գործում է պաշտոնը, ազգանունը, անունը _____

_____ հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է Գնորդին, որպես սեփականություն, հանձնել ապրանք, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:

1.2. Սույն պայմանագրին համապատասխան՝ ապրանք է համարվում

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Վաճառողն իրավունք ունի պահանջել Գնորդից վճարելու ապրանքի համար, իսկ ուշացման դեպքում՝ նաև տոկոսներ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածին համապատասխան.

2.2. Վաճառողը պարտավոր է՝

2.2.1. Գնորդին հանձնել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված պայմաններին համապատասխան:

2.3. Գնորդն իրավունք ունի՝

2.3.1. եթե Վաճառողը հրաժարվում է հանձնել վաճառված ապրանքը, միակողմանի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց.

2.3.2. եթե Վաճառողը հանձնել է սույն պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը կամ հրաժարվել չհանձնված ապրանքի համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը.

2.3.3. եթե հանձնված է անպատշաճ որակի ապրանք, իր ընտրությամբ պահանջել՝

ա) համաչափ պակասեցնելու ապրանքի գինը.

բ) ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու ապրանքի թերությունները.

գ) հատուցելու ապրանքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսեր.

2.3.4. չվերացվող թերություններ հայտնաբերելու դեպքում, իր ընտրությամբ՝

ա) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը.

բ) պահանջել փոխարինելու անպատշաճ որակի ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով.

2.3.5. անկոմպլեկտ ապրանք հանձնելու դեպքում իր ընտրությամբ պահանջել՝

ա) համաչափ պակասեցնելու ապրանքի գինը.

բ) ողջամիտ ժամկետում կոմպլեկտավորելու ապրանքը.

2.4. Գնորդը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված տեսականուն չհամապատասխանող ապրանքն ընդունելու դեպքում՝ դրանց համար վճարել Վաճառողի հետ համաձայնեցված գնով.

2.4.2. ապրանքի համար վճարել սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով.

2.4.3. ապրանքը Վաճառողից ընդունելու ժամանակ ստուգել ապրանքի անվանման, քանակի և որակի համապատասխանությունը թիվ 1 հավելվածին: Ապրանքն ընդունելու արդյունքում կողմերը կազմում և ստորագրում են ապրանքի ընդունման և հանձնման ակտ, որում նշվում է ապրանքի անվանումը, քանակը, որակը, հայտնաբերված թերությունները:

3. Հաշվարկները

3.1. Պայմանագրին կից թիվ 1 հավելվածում նշված ապրանքի ընդհանուր գումարը, որը Գնորդը պետք է վճարի Վաճառողին, կազմում է _____ դրամ:

3.2. Գնորդը պայմանագրի 3.1. կետում նշված գումարը վճարում է Վաճառողին _____՝ սույն պայմանագրին

կանխիկ կամ փոխանցումով

ստորագրելու պահից _____ օրվա ընթացքում:

3.3. Եթե Գնորդը պայմանագրով սահմանված ժամկետում չկատարի հանձնված ապրանքի համար վճարելու իր պարտականությունները, ապա Վաճառողն իրավունք ունի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Վաճառողի կողմից ապրանքը հանձնելու կետանցի դեպքում նա Գնորդին վճարում է ապրանքը հանձնելու պարտականությունը կատարելու ժամկետի սկզբից կետանցի յուրաքանչյուր օրվա համար տույժ՝ ապրանքի գնի _____ տոկոսի չափով:

4.2. Կողմերը սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում, իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Այլ պայմաններ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և դադարում է պատշաճ կատարմամբ:

5.2. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր: Դրանք պետք է ստորագրեն կողմերը:

5.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

6.4. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վաճառող	Գնորդ
_____	_____
_____	_____
_____	_____
ստորագրություն	ստորագրություն

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ: ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Ուղղագրական կանոնների ապահովման չափը: Այս փաստաթուղթը փոքր-ինչ «վթարային» է: Կանոնական է առանցքային հասկացությունները («վաճառող», «գնորդ»)

հետևողականորեն մեծատառով ներկայացնելու կերպը: Փաստաթղթում ուղղագրական անհարթությունը զուտ կետադրական բնույթի է, որին կանդրադառնանք ստորև: Իսկ մինչ այդ ներկայացնենք տեքստում մի բարդ կառուցվածքի կանոնական կետադրության ապահովման փաստը: Գրական լեզվի կանոնի համաձայն՝ թվարկմանը նախորդող ընդհանուր միավորը և թվարկվող բաղադրիչները (որոնք արժույթային սերտ հարաբերությամբ են կապված, և նոր տողով չթվարկվելիս չեն տրոհվում) տրոհվում են բուրժով, որը դրվում է ընդհանուր միավորի վրա, իսկ տողատված թվարկյալները տրոհվում են ստորակետով: Ընդհանուր և թվարկյալ միավորների արժույթային-խնդրառական սերտությամբ պայմանավորված՝ թվարկյալների սկզբնաբառերը փոքրատառ են գրվում [3:40]: Այս առումով 2.3. կետն ամբողջությամբ՝ նշվածից մինչև 2.3.5. կետի բ ենթակետը ներառյալ, լիովին կանոնական է: Կա, սակայն, մեկ-երկու կետադրական սպրդում: 2.3.4. կետի 1-ին տողում՝ «դեպքում» բառից հետո, ավելորդ ստորակետ կա: 2.4.1. կետի 2-րդ տողում՝ «դեպքում» բառի վրա, ավելորդ բուրժ կա: 6.4. կետի 1-ին տողում՝ «լեզվով» բառից հետո, ավելորդ ստորակետ կա: Թերևս այն չլիներ, եթե «հայերեն լեզվով» կապակցության մեջ չլիներ «լեզվով» հավելադրությունը:

Քերականական կանոնների ապահովման չափը: 2.1. կետի 3-րդ տողում՝ «հողվածին համապատասխան» հիմունքի պարագայի մեջ, 1-ին բաղադրիչում «ն» հոդն ավելորդ է: Գնորդի իրավասության տիրույթն ընդգրկող հատվածը՝ 2.3. կետը՝ բոլոր ենթակետերով (2.3.–2.3.5.), շարահյուսական բարդ կառուցվածք է, որտեղ փոքր-ինչ շփոթ կա արժույթային հարաբերությունների: Այսպես՝ 2.3. կետի՝ «Գնորդն իրավունք ունի» միջուկային նախադասության առաջնային կապակցյալները պիտի լինեն սեռականով լրացումներ՝ հատկացուցիչներ՝ ըստ «իրավունք» բառի թելադրած արժույթայնության (ինչի՞ իրավունք): Մակայն լեզվականորեն հնարավոր հատկացուցիչները նմուշի մեջջ սեռական հոլովի

փոխարեն ուղղականով դրված անորոշ դերբայներ են՝ «հրաժարվել», «պահանջել» (տե՛ս 2.3.1–2.3.5. կետերը)՝ փոխանակ «հրաժարվելու», «պահանջելու»: Եվ ահա շրջադասված հատկացյալ + հատկացուցիչ կապակցության փոխարեն գոյացել է բաղադրյալ անվանաբայական ստորոգյալ (օրինակ՝ «խրավունք ունի պահանջել»), որը, հակառակ այսօր իր համաբանական տարածվածությանը, այնուամենայնիվ, լեզվական կանոնավոր կաղապարի չի վերածվել: Բայց բանը դրանով չի ավարտվում: Ներգոծական սեռի «պահանջել» բայը բնականոն արտահայտվելու դեպքում արժույթային ուժով ուղիղ խնդիր արժույթներ պիտի ունենար հետևյալ կերպ՝ «պահանջելու լրացնել», «պահանջելու վերադարձնել»: Քանի որ արժույթակիր «պահանջել» բայը սեռականով չի արտահայտվել, փոխարենը տրականով արտահայտվելու հնարավորություն են ստացել հայերենի լեզվական կաղապարով ենթադրվող հնարավոր ուղիղ խնդիրները՝ հետևյալ կառուցվածքով՝ «պահանջել լրացնելու», «պահանջել վերադարձնելու»՝ վերջիններիս հատկացնելով նպատակի պարագայի պաշտոն: Անշուշտ, կարող են դրանք նպատակի պարագայի դեր ստանձնել, միայն թե այս դեպքում պիտի գործեր հետադաս դերբայական դարձվածի կետադրական կանոնը՝ նրանից առաջ բութ դնելով, օրինակ՝ «... պահանջել՝ վերադարձնելու վճարված գումարը»:

Նույն նախադասության ներսում բացառականով խնդիր պահանջելու պարտադիր արժույթայնությամբ օժտված բայը՝ «հրաժարվում է», հարակից բաղադրիչ նախադասություններից մեկում գործածվում է ուղղական հոլովով անորոշ դերբայի հետ, մյուս բաղադրիչում՝ իր՝ բացառականով արժույթի հետ [5: 466-487] (մեջբերումը կատարում ենք՝ հատկացուցիչ սեռական հոլովը վերականգնելով). «հրաժարվել» բայն ընդգծում ենք իր արժույթների հետ.

«2.3. Գնորդն իրավունք ունի՝

2.3.1. եթե վաճառողը հրաժարվում է հանձնել վաճառված ապրանքը, միակողմանի հրաժարվելու սույն պայմանագիրը կատարելուց»:

Արժութային նույն խախտումը կա 2.1. կետի 1-ին տողում, որտեղ գրված է. «Վաճառողն իրավունք ունի պահանջել գնորդից վճարելու ապրանքը՝ փոխանակ գրված լինելու. «Վաճառողն իրավունք ունի պահանջելու գնորդից վճարել ապրանքը»:

Նշենք նաև, որ պատահում են բառագործածության սպորդումներ՝ անհարկի օտարաբանություններ. 2.3.5. կետի առաջին իսկ բառը՝ «անկումպլեկտ», և նույն կետի Բ ենթակետի նախավերջին՝ «կումպլեկտավորել» բառը, վաղուց ունեն իրենց հայերեն համարժեքները. առաջինի համար ունենք անլրակագմ, երկրորդի համար՝ համալրել հայերեն համապատասխանությունները:

**ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ: ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՏԵՔՍՏԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ**

Սույն փաստաթղթում պայմանագրի առարկան առանձնացված է նաև որպես ինքնուրույն բաղադրիչ: Այս հանգամանքը կարող է ստիպել փաստաթղթի կառուցվածքային բաղադրիչների տարբերակման սկզբունք որդեգրել: Դրա համար մեզ տրված է երկու հնարավորություն: Կարելի է փաստաթղթի կառուցվածքում պայմանագրի առարկան հատկացնել հիմնամասին որպես նրա մի ներածական ենթաբաղադրիչ: Կարելի է նաև, այդ ներածականությունը հաշվի առնելով, առարկան հատկացնել մուտքի բաղադրիչին՝ խորքային համաբանության աղերս անցկացնելով գիտական տեքստի ներածական բաղադրիչի հետ, այսինքն՝ հիմք ընդունելով ոչ թե արտաքին նշանակիչը, այլ ներքին նշանակյալը: Այնուամենայնիվ, քանի որ պայմանագրում առկա է տեքստի բովանդակությանը «հետևյալ» բառով հղում արված ազդանշանը [2: 125-138], հիմնամասի բաղադրիչ կհամարենք հիշյալ

ազդանշանին հաջորդող հատվածը՝ բացառությամբ ելքի բաղադրիչի:

Մուտքի բաղադրիչը, այսպիսով, ընդգրկում է սկզբից մինչև 1-ին կետն ընկած հատվածը: Մուտքի բաղադրիչի նշանակյալ պիտի դիտել կողմերի միջև պայմանագրի կնքման իրազեկային փաստը, որի նշանակիչը ստորագումն է՝ «կնքեցին» բայի, պայմանավորվող կողմերը անուններով ու պաշտոններով մատնանշող բազմակի ենթակաների և «պայմանագիրը» ուղիղ խնդրի համակցությամբ: Միաժամանակ մուտքի բաղադրիչն ամբողջությամբ հղման նշան է հետաբերական տեքստամասի, որը մուտքին է հարաբերվում «հետևյալի մասին» հետաբերիչի (կատաֆորանտ) ազդանշամբ:

Հիմնամասի բաղադրիչն ընդգրկում է 1-6-րդ կետերը՝ հետևյալ ենթաբաղադրիչներով՝ «Պայմանագրի առարկան», «Կողմերի իրավունքները և պարտականությունները», «Հաշվարկները», «Կողմերի պատասխանատվությունը», «Այլ պայմաններ» (ի դեպ, «Այլ պայմաններ»-ին հաջորդում է 6-րդ կետը՝ ոչ միայն անվերնագիր, այլև միանգամից «6.4.» ենթակետով):

Պայմանագրային փոխադարձ պարտավորությունների թվարկված ամբողջությունը բացահայտիչն է մուտքի բաղադրիչի վերջին միավորի՝ «հետևյալի մասին» բացահայտյալի:

Ելքի բաղադրիչն ավելի պարզ կազմություն ունի: Չկա այստեղ որևէ առանձնահատկություն, սոսկ ընդգրկում է վաճառողի և գնորդի հնարավոր տվյալները՝ համապատասխան տիրույթում յուրաքանչյուրի ստորագրության պահանջով:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վաճառող	Գնորդ
_____	_____
_____	_____
_____	_____
ստորագրություն	ստորագրություն

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

1) Իրավական (այդ թվում՝ նոտարական) փաստաթղթերի հասցեատերը թե՛ հանրությունն է, թե՛ նրա յուրաքանչյուր անդամը: Հանրության և անհատների իրավահարաբերությունները կարգավորվում է հենց այդ փաստաթղթերով, ուստի դրանք ճակատագրական նշանակություն կարող են ունենալ հասցեատիրոջ համար: Սա նշանակում է, որ իրավաբանական մտային ձևակերպումներն առավելագույն ճշգրտության են ենթակա: Իրավաբանության զնեքը լեզուն է, որով պիտի ապահովվի մտքերի, իրավական դրույթների ճշգրտությունը: Հենց այստեղ՝ այս հանգակետում են հատվում իրավաբանության և լեզվաբանության հետաքրքրությունները, ուստի մեծ է երկկողմ հետաքրքրություն ներկայացնող իրավալեզվաբանության միջգիտակարգի [4:3] դերը իրավական վավերագրերի պատրաստման և կազմության ասպարեզում:

2) Նկատի առնելով նախորդ կետում նշված ճշգրտության պահանջը՝ իրավական վավերագրերը պետք է կազմվեն պաշտոնական լեզվի կառուցվածքային բոլոր մակարդակների քաջիմացությամբ՝ սկսած հնչյունական-ուղղագրականից, ավարտած տեքստով ու տեքստակազմությամբ:

3) Չննելով նոտարական փաստաթղթերը՝ պարզում ենք, որ դրանք, անկախ իրենց կազմում եղած դրույթների կետերի քանակից, եռամասնյա բաղկացություն ունեն: Հիմնվելով պաշտոնապես հաստատված նոտարական նմուշների վրա՝ նոտարները պարտավոր են նոտարական տեքստակազմությունն իրականացնել այնպես, որ տարբեր դրույթներ ներկայացնող կետերի քանակը ներդաշնակ լինի նոտարական տեքստի տրամաբանական եռամասնության սկզբունքին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. <https://www.advocatearm.am/files/2.pdf>
2. Աբրահամյան Ա., (2023) Իրականություն, լեզվագիտակցություն, նշան, Երևան, ԵՊՀ հրատ., 304 էջ:
3. Աբրահամյան Ս., (1999)-Հայերենի կետադրություն, Երևան, , 64 էջ:
4. Ապրեսյան Մ., (2010)-Մասնագիտական (իրավաբանական) լեզվի և գործառական ոճի հարաբերակցությունը, Երևան, ԵՊՀ հրատ., 56 էջ:
5. Ջահուկյան Գ. (1974)- Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., , 588 էջ: